

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Է. Ս. ՄՈՐԻԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՅ ՄԻՆՉԵՎ VII ԳԱՐԸ

Հնագիտական նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից երկրաբանական դարաշրջանի սկզբում Հայաստանի տերիտորիայում տարածված են եղել վայրի ցորենը, դարին, խաղողը, խնձորենին, տանձենին, ընկուզենին, գլեհը<sup>1</sup>։

Քարե դարի ժամանակաշրջանում օգտակար բույսերը մարդը հավաքում, ցանում է իր բնակարանի շրջակայքում ու զբաղվում դրանց մշակությամբ, դրանով իսկ անգիտակցաբար սկիզբ դնելով գյուղատնտեսությանը։ Ստեղծվում են Հայաստանի երկրագործության առաջին օջախները։ Երկրագործության կենտրոններ են դառնում Արարատյան դաշտը, Արածանիի հովիտը, Հայոց ձորը։

Բույսերն իրարից տարբերելու համար մարդը անուններ է տվել դրանց, ելնելով նրանց արտաքին յուրահատուկ նշաններից։ Բուսական աշխարհի հետ ծանոթությունն ավելի է ընդարձակվում ու խորանում պղնձի, բրոնզի և երկաթի դարաշրջաններում<sup>2</sup>։ Ցածրագիր վայրերում բնակչությունն զբաղվում էր հացահատիկային բույսերի մշակությամբ և այգեգործությամբ, իսկ լեռնային վայրերում՝ անասնապահությամբ։ Այդ բոլորը ապացուցված է Հայաստանի էնեոլիթյան բնակավայրերում կատարված պեղումների նյութերով։ Շենգավիթում, Շրեշ-բլուրում, Նախիջևանում հայտնաբերվել են մշակովի ցորենի, հաճարի, գարու հատիկներ,

<sup>1</sup> Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 101։

<sup>2</sup> Տե՛ս Ա. Գ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 26։

գրոնք ունեն 8—6 հազար տարվա պատմութիւն: Գառնիում գտնվել են ծիրանի, իսկ Շենգավիթում՝ կեռասի կորիզներ: Խանլարի էնեոլիթյան բնակատեղիում (Արցախում), հայտնաբերվել են դեղձի կորիզներ, խաղողի և մորու սերմեր<sup>3</sup>: Հայաստանում այգեգործութիւնը թեև սկզբնավորվել է շատ վաղուց, բայց սկսել է զարգանալ հիմնականում մ. թ. ա. IV հազարամյակի սկզբներին: Միաժամանակ այդ նյութերը ցույց են տալիս, որ ծիրանը, դեղձը, կեռասը, խաղողը Հայաստանի հնագույն բնակիչների համար եղել են արժեքավոր սննդամթերք:

Սննդամթերքից բացի մարդը տարբեր տեսակի բույսերը օգտագործել է հազուատի, գործիքների, դեղերի, վառելիքի և այլ կարիքների համար: Ուստի մարդիկ բնականաբար իրենց գոյութիւնը կապելով բույսերի հետ, դրանք դարձնում էին պաշտամունքի առարկա:

Քրիստոնեութիւն շրջանում ծառապաշտութիւնը ավելի մեծ չափեր է ընդունում: Պաշտամունքի առարկա են դառնում խնձորենին, տանձենին, ընկուզենին, թթենին, շինարին, ուռենին, վարդենին: Պաշտամունքի ենթակա են եղել նույնիսկ առանձին անտառներ, այգիներ, հասակավոր ծառեր<sup>4</sup>: Ըստ Մովսես Խորենացու, «Սոսյաց անտառը» սրբազան վայր է համարվել: Այն նվիրված էր Արա Գեղեցիկի թոռանը՝ Անուշավանին: Սմբատ Շահազիզի վկայութեամբ, թթենու ծառը համարվել է նահապետական ընտանիքի անդամներից մեկը: Դա կտրելիս մարդիկ սզացել են, ինչպես ընտանիքի անդամներից մեկի մահվան դեպքում: Ծառերի պաշտամունքի հետ կապված որոշ հավատալիքներ պահպանվել են մինչև մեր օրերը: Հիշենք «ծառաղարդի» ու «ծաղկաղարդի» տոներ: Մարդիկ իրենց բազմաթիվ կարիքների համար ստեղծել են նաև մի շարք աստվածներ: Հայկական պանթեոնում Ամանորը (նոր տարին) բերքի, պտղի, խաղողի, դինու և ուրախութեան աստվածն է: Ամանորին էր նվիրված բերքի տոնը, որը կատարվում էր ամեն ամառ՝ Հայոց նավասարդ (այժմ՝ օգոստոս) ամսի առաջին օրերին:

Այգեգործութիւնը Հայաստանում հատկապես զարգացած է եղել մ. թ. ա. IX—VII դարերում: Բազմաթիվ փաստեր կան այդ ժամանակաշրջանում անցկացված արհեստական ջրանցքների,

<sup>3</sup> Ե. Կ. Արակелян, Гарни, I, Ереван, 1954, стр. 25.

<sup>4</sup> Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931, հատ. I, էջ 169, 210:

պողատու և խաղողի այգիների հիմնադրման աշխատանքների մասին Այսպես, Վանի մոտ գտնվող Մհերի դուան վրա Մենուան (871—810 թթ. մ. թ. ա.) թողել է հետևյալ հիշատակությունը. «Խաղողի և պողատու այգի այստեղ տնկեցի»:

Արարատյան դաշտում հայտնաբերված արձանագրություններից մեկում Արդիշտի թագավորը (781—760 թթ.) հաղորդում է. «Աստծո հզորությամբ հոյակապ բերդ ևս կառուցեցի... գետից ջրանցք անցկացրի, խաղողի ու պողատու այգիներ տնկեցի»: Այդ շրջանի այգեգործության ուսումնասիրության համար կարևոր տեղեկություններ են տալիս նաև պեղումների նյութերը: Վանի, Արմավիրի, Կարմիր բլուրի, էրերունիի պեղումներից հայտնաբերված պողատու առանձին տեսակների կորիզների և գինու կարասները մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ Հայաստանի մի շարք շրջաններում, առանձնապես Վանա լճի շրջակայքում ու Արարատյան դաշտում, լայն տարածում է ստացել պողատու մի շարք տեսակների մշակությունը: Ըստ որում, դա եղել է զարգացած այգեգործություն: Այդ են ապացուցում հին հայկական բնակավայրերից հայտնաբերված խաղողի, ծիրանենու, դեղձենու, շերենու կորիզների ու պտուղների ածխացած մնացորդների ուսումնասիրությունները, որոնք պատկանում են ոչ թե նոր սկյրնավորվող պողատուների, այլ զարգացման բավականին բարձր աստիճանի վրա գտնվող տեսակների սորտերին: Ավելիքն, պրոֆեսոր Ս. Հ. Պողոսյանի<sup>5</sup> կարծիքով, Կարմիր բլուրում գտնված խաղողի սերմերը նման են այժմ Արարատյան դաշտում մշակվող Ոսկեհատ, Գառան դմակ և Մսխալի սորտերի սերմերին: Գրանից կարելի է գալ այն եզրակացություն, որ Հայաստանը, իրոք, խաղողի, ծիրանի, դեղձի հայրենիքն է կամ նրա մշակության հիմնական օջախներից մեկը: Այնուամենայնիվ, մինչև այժմ հնագիտական ուսումնասիրությունները Հայկական լեռնաշխարհի գյուղատնտեսության վերաբերյալ բացել են միայն 8000—6000 տարվա պատմությունը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ առաջին գրավոր տեղեկությունները վերաբերում են մ. թ. ա. V դարի օտարազգի հեղինակներին:

Հերոդոտ Հալիկարնացին (480—426 թթ. մ. թ. ա.) պատմում է, որ «արմենները Եփրատ և Տիգրիս գետերի վրայով դեպի

<sup>5</sup> С. А. Погосян, О природе семенных растений стародавних сортов корнесобственного винограда и их гибридов, Ереван, 1955, стр. 13.

Բարեկուն վաճառելու էին տանում գինի և գյուղատնտեսական այլ մթերքներ»:

Իր հերթին պատմիչ Քսենոփոն Աթենացին (430—356 թթ. մ. թ. ա.) «Անարասիս» աշխատության մեջ հետաքրքիր տեղեկություններ է տալիս հայերի ապրելակերպի և զբաղմունքի մասին: Ըստ նրա, Հայաստանը այդ ժամանակ ընդարձակ, հարուստ և բարեկեցիկ երկիր էր, որտեղ ժողովուրդը բնակվում էր գետերի ափերին և լեռնահովիտներում հիմնած գյուղերում: Քսենոփոնի այն վկայությունը, թե «գյուղերը լի էին բազում պաշարեղենով, այնտեղ առատ էր հացը, միսը, գինին, ձեթը, շամիրը, շիրը»<sup>6</sup>, համոզիչ ապացույցներից է այն բանի, որ Հայաստանում այդ ժամանակ երկրագործությունը, այդ թվում նաև այգեգործությունը գտնվում էին զարգացման բավականին բարձր աստիճանի վրա:

Հին Հայաստանի գյուղատնտեսության համար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում Արտաշեսյանների տիրապետության ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. II—I դարերում: Մովսես Խորենացու վկայությամբ, այդ ժամանակ «Հայոց աշխարհում անմշակ հող չէր կարելի գտնել ոչ լեռնային և ոչ դաշտային մասերում»<sup>7</sup>: Գյուղատնտեսությունը բուռն վերելք ապրեց Արտաշես I-ի թագավորության տարիներին (189—160): Պատմիչների վկայություններից և հնագիտական ուսումնասիրություններից պարզվում է, որ ինչպես անցյալ, այնպես էլ այդ շրջանում Արարատյան դաշտում, Սյունիքում, Արածանիի հովտում, Վանա լճի շրջակայքում և այլ վայրերում զարգացած էր նաև այգեգործությունը: Ստրաբոնը (63—20 թթ. մ. թ. ա.) ասում է, որ Հայաստանը «Մեծ մասամբ այգեշատ ու գինեվետ է», կամ «...լիքն է պտղատու և մշտադալար ծառերով»: Եվ իրոք, այդ ժամանակ արդեն մշակության մեջ բավականին մեծ տարածում էին ստացել ծիրանենին, դեղձենին, շերենին, խնձորենին, տանձենին, սերկևիլենին, ընկուզենին, թթենին, թզենին, նոնենին, խաղողը:

Գյուղատնտեսության և արհեստների զարգացման ու քաղաքային բնակչության աճին զուգընթաց, Հայաստանում աշխուժանում էր նաև ներքին և արտաքին առևտուրը: Դրան մեծ շահով նպաստում էին երկրի տերիտորիայով անցնող միջազգային տարանցիկ ճանապարհները, հայկական հին քաղաքների՝ Վանի, Արմավիրի,

<sup>6</sup> Քսենոփոն, Անարասիս, Երևան, 1971, էջ 97—98:

<sup>7</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 191:

Երվանդաշատի գարգացումն ու նորերի՝ Արտաշատի, Տիգրանակերտի, Զարեհավանի կառուցումը:

Երկրի ներքին շուկայում վաճառվում էին գյուղատնտեսական մի շարք մթերքներ: Հայկական մատենագրության մեջ պահպանված «Տաջարար», «մսավաճառ», «գինեվաճառ», «ծիրահավաճառ» բառերը ցույց են տալիս, որ II—I դարերում գյուղատնտեսական մթերքների մի մասը դարձել է վաճառքի առարկա և ապրանքային բնույթ է ստացել:

Ներքին առևտրի հետ միասին լայն շափեր է ընդունում նաև արտաքին առևտուրը: Երկիրը առևտրական կապեր է հաստատում Միջագետքի, Ասորիքի, Բարեյունի, Պարթևստանի, Կասպադովկիայի, Ատրպատականի, Վրաստանի հետ: Տիգրան II-ի ժամանակ (95—56) Հայաստանի տնտեսական և առևտրական կապերը հարևան երկրների հետ ավելի են ընդարձակվում: Հայաստանը կարճ ժամանակով իր հսկողության տակ է առնում ոչ միայն միջազգային առևտրի մայրուղիները, այլև Եփրատի և այլ ջրերի գետանցքները:

Թագմական ու տնտեսական նկատառումներով Տիգրան Մեծը կառուցում է Տիգրանակերտից Արտաշատ տանող «Արքունի ճանապարհը»: Այդ և մի քանի ուրիշ ճանապարհներով էր կատարվում հնդկական համեմունքների, պարսկական թանկարժեք գորգերի, ասորական պերճանքի առարկաների առևտուրը: Հայաստանից հիշյալ երկրներն էին արտահանվում «որդան կարմիր» ներկ, հացահատիկ, գինի, շոր մրգեր, դեղաբույսեր: Հենց այս ժամանակաշրջանում էլ Հայաստանից Եվրոպա է տարվել ծիրանենին, որի համար էլ անվանվել է հայկական խնձոր:

Հայտնի է, որ մեր թվականության երրորդ դարից Հայաստանում սկսում է ձևավորվել ֆեոդալիզմը: Նոր հասարակարգը իր հետ բերում է տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի բնորոշ փոփոխություններ: Ֆեոդալական հասարակարգի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն ավատական խոշոր հողատիրությունն էր: Վաղ ֆեոդալիզմի շրջանում երկրի ամենախոշոր հողատերը արքունիքն էր: Արքունական ընդարձակ կալվածքներ են եղել Հայաստանի մի շարք նահանգներում, սակայն դրանց հիմնական մասը կենտրոնացված էր Արարատում: Մ. Խորենացին Արարատյան նահանգը կոչում է «կալուածք արքայի»: Իրենց ծավալով արքունական կալվածքներին համարյա չէին գիջում

<sup>8</sup> Զ. Գ. Ժամկոչյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1963, էջ 94—96:

բղեշխնների, խոշոր նախարարների և վանքապատկան կալվածք-ները: Զենոբ Գլակի հաղորդած մի տեղեկությունից իմանում ենք, որ Տարոնի նահանգի Գլակա վանքն ուներ 12 մեծ ավան, իսկ Ղևոնդ Ալիշանի տվյալներով, Արարատյան նահանգի էջմիածնի վանքը՝ ութ մեծաշեն գյուղեր:

Այս շրջանում ժողովրդի ամենաբազմամարդ և ճնշված մասը շինականներն էին՝ հասարակ գյուղացիները, որոնք ամբողջապես կախման մեջ էին հողատեր-ֆեոդալներից: Նրանք հողատերերի համար պարտավոր էին ձրիաբար կատարել մի շարք աշխատանքներ և վճարել բազմաթիվ հարկեր<sup>9</sup>:

Չնայած ֆեոդալական Հայաստանի գյուղացիության ծանր կացությանն ու արտաքին թշնամիների ասպատակություններին, երկրում գյուղատնտեսության առաջընթացը կանգ չի առնում և նույնիսկ առաջադիմում է: Դրան մեծ շափով նպաստում է ֆեոդալական խոշոր տնտեսությունների առաջացումը: Երկրի համեմատաբար զարգացած գավառներում հողագործության մեջ արմատավորվում է հողաշտը: Ցանքերն ու այգիները պարարտացվում են, մաքրվում մոլախոտերից: Նոր անցկացված ջրանցքները առատ ջուր են մատակարարում այգիներին, ցանքերին, բանջարանոցներին:

Վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում սկզբնավորվում է նաև գյուղատնտեսական գիտությունը: Սրան նպաստում է մայրենի լեզվով գիր ու գրականության ստեղծումը: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ պտղատու տեսակների գրական անունների և այգեգործական տերմինների առկայությունը ասում է այն մասին, որ դրանք ստեղծվել են ոչ թե V դարում, այլ շատ ավելի վաղ: Աստվածաշնչում տարբեր առիթներով հիշատակվում են այգի, հնձան, ծառ, ոստ, ծաղիկ, պտուղ, պտղաքաղ, ծիրան, նուշ, որթ, տանձենի, ընկուզենի, նռնենի, թզենի, ձիթենի, արմավենի բառերը: Նրա առանձին էջերում հանդիպում ենք հետևյալ մտքերին. «Այգի տաց է զպտուղ իւր», «հանդերձ պտղովք մրգաբերաց» «մեծացավ ծառն և զորացավ», «պտղաբերք աճեցունք գիտությունք», «անդաստանք պտղոց», «ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի»: Որոշ տեղերում էլ խոսվում է պտղատու ծառերի մի քանի տեսակների մասին: Այսպես, օրինակ, 1860 թվականի հրատարակության էջերից մեկում կարդում ենք հետևյալը. «Ի պարտէզս ընկուղեացն իջի հայել յարդինս վտակացն, տեսա-

<sup>9</sup> Ա. Գ. Աբրահամյան, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում, Երևան, 1951, էջ 7—8:

նել թե ծակեա՞լ իցե որթ, թե ծաղկեա՞լ իցե նոճ, թե ծաղկեա՞լ իցեն նոնենիք» և այլն<sup>10</sup>։

«Աստվածաշնչից» հետո, V դարի թարգմանական գրականութեան մեջ կարևոր տեղ են զբաղում հույն մատենագիր Բարսեղ Կեսարացու գործերը։ Բարսեղ Կեսարացին (323—379 թթ.) անտիկ բնափիլիսոփայութեան ներկայացուցիչներից է։ Նրա թողած գրական ժառանգութեանից մեզ համար հետաքրքիր է «Վեցօրէից» կամ «Ճառք վասն վեցօրէայ արարչութեան» վերնագրով աշխատութեանը, որտեղ հեղինակը իր կրոնափիլիսոփայական հայացքներին դուզահեռ արժեքավոր տեղեկութեաններ է տալիս մի շարք խոտարույսերի, բանջարանոցային բույսերի և ծաղկատեսակների մասին, բնութագրում նրանց բուսարանական, կենսարանական և ժառանգական հատկանիշները։ Նա բույսերը դասակարգում է երկու խմբի՝ սերմնատունների և անսերմների։ Սերմնատունները բազմաճյուղ են սերմերով, իսկ անսերմները՝ արմատներով կամ ոստերով։

Կեսարացին հիշատակում է նաև ձիթենու, արմավենու, թղենու, թթենու, նշենու, ընկուզենու, խաղողի և պտղատու այլ տեսակների անունները<sup>11</sup>։ Ըստ նրա, ծառերը լինում են բարձրատեղ, ցածրատեղ, մշտադալար և տերևաթափ։ Ծառերը կազմում են խիտ անտառները՝ մայրիներ, սոսիներ, կաղամախիներ, ծառեր պտղաբեր և անպտուղ, ծառեր՝ պաշտամունքի, ծառեր՝ պիտանի գործի և անուշահոտութեան։ Իրեն առավել հայտնի ծառերը բնութագրելիս, ձիթենու մասին գրում է. «Հանապազոր դալարացեալ կանաչազեղ է, և ուրախարար և հանգուցիչ է ազնուական պտղով»։ Թթենին ունի անուշահամ, իսկ նշենին՝ բաղդր և դառը պտուղներ։ Կեսարացին բավականին հմտութեամբ շոշափում է նաև կենսարանական որոշ հարցեր։ Այսպես, նա գիտե, որ «կէսքն ի ծառոց խորարմատք են և տարածատակք, և կէսքն սողազնացք նօսրարոյսք են. և կէսքն միաճետիք յատակարուխք, և կէսքն բազմաոստք խոստոստեայք, և կէսքն գետնատարածք»։ Ծառերի մի քանի տեսակների կտրելուց հետո, արմատներից մացառներ են արձակում, մյուսները, ընդհակառակն, մացառներ չեն տալիս։

Ավելի ուշագրավ է Կեսարացու այն միտքը, որ ծառերն ըստ սեռի տարրեր են լինում. «կէսքն ի կերպարանս և ի մասունս

<sup>10</sup> Աստվածաշունչ հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1860, էջ 94։

<sup>11</sup> Բարսեղ Կեսարացի, Ճառք վասն Վեցօրէայ արարչութեան, Վենետիկ, 1830, էջ 96։

արուաց անուանին իւրաքանչիւր պտղովքն, կէսքն զկերպարանս  
և զնմանութիւն իգաց ունին ըստ իւրաքանչիւր մրգույն. և վկայեն՝  
որ միշտ տնկեն զտունկս ծառոցն, զի այսպէս դնեն նոցա  
անուննս՝ արուս և էգս, և զատեալ մեկնին ի պտղոցն անտի և  
կերպարանաց»:

Այդպիսի ծառերից է, օրինակ, արմավենին, «զի էգ արմաւե-  
նին խոնարհեցուցանէ զոստս իւր ի կողմն արու արմաւենոյն և ի  
մերձենալ ոստոցն առ միմեանս՝ իբրև սէր իմն և զութ և ամուս-  
նութիւն կատարի»: Այս կարգի ծառ է նաև թղենին: Հայտնի է  
թղենու մի տեսակ, որը կոչվում է վայրի մոլաթուզ. սա տնկում  
են թղենու մոտ, որպեսզի «ի նորա շոգոյն պահեսցի թուզն  
լընտանի թղենուջն, և եկեսցի հասցնէ ի շափ, և եփեսցի առանց  
վնասելոյ»<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք, դեռևս IV դարում առանձին մարդկանց  
հայտնի են եղել պտղատու ծառերի ինքնափոշոտման և խաչածե-  
փոշոտման խնդիրները, թեև այն ներկայացվում է որոշ շափով  
սխալ մեկնաբանութիւններով: Մինչդեռ գիտութեան մեջ նրա  
հայտնաբերումը կապվում է Չ. Դարվինի և հետագայում ամերիկ-  
յան հետազոտող Մ. Ուայթի անվան հետ:

Կեսարացու համար զարմանալի է այն երևույթը, որ նույն  
ծառի արմատների միջոցով վերցված ջուրը մի ձևով է սնում  
բողբոջը, այլ ձևով՝ շիվը, այլ տեսքով գունավորում պտուղը:  
Սկսած այսպես, ծառի մեջ այդ նույն ջրի մի մասը փոխվում է կաթի,  
մյուսը՝ խեժի կամ այլ նյութերի: Զարմանալի է նաև, որ նույն  
հողում աճեցված խաղողից գինի է ստացվում, ձիթապտղից՝ ձիթ:  
Տարբեր է նաև առանձին տեսակների քաղցրութիւնը. այլ է  
խնձորի պտուղների քաղցրութիւնը, այլ՝ արմավենուներ: Ամբողջ  
աշխարհը զարգարով բույսերը, եզրակացնում է Կեսարացին,  
մարդկանց կարիքների համար են, որպեսզի մարդը նրանց պտուղ-  
ները վայելի, փայտը այրի կամ օգտագործի իբրև շինանյութ:

Բարսեղ Կեսարացին «Վեցօրէից»-ում գյուղատնտեսական  
գիտութիւնը ներկայացրել է գրեթե այնպես, ինչպես այն տվել  
են դրանից շուրջ 800 տարի առաջ նրա ստեղծողներ Արիստոտելը  
և Քեոֆրաստեսը: Այս աշխատութիւնը մեծ ազդեցութիւն է  
ունեցել V և հետագա մի քանի դարերի հայ գիտական մտքի  
զարգացման վրա:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 97—98:

Հայաստանում մշակվող պտղատու ծառատեսակների մասին արժեքավոր հիշատակություններ կան IV դարի սկզբի հայ առաջին պատմիչ Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ, ուր «Բողոքոջի ծառոց և բուսաց ի դարուն եղանակի...» ու «Բուսանեկ ծաղկանց և փշոց իւրաքանչիւր բնութեամբ<sup>13</sup>...» ընդհանուր վերնագրի տակ արվում են մոտ 70 բույսերի անուններ ու նրանց առանձնահատկությունները:

«V դարում Հայաստանում տարածված այսքան բույսերի մասին տեղեկություններ հազորդելը,—ինչպես նշում է նաև պրոֆեսոր Ա. Տեր-Պողոսյանը,—գիտական մեծ արժեք է ներկայացնում և ցույց է տալիս, որ հեղինակը ծանոթ է իր ժամանակի ընդհանուր բուսաբանությունը և նրա կարգաբանությունը»<sup>14</sup>:

Ագաթանգեղոսը բույսերը նկարագրել է ծառատեսակների, ծաղկաբույսերի, հացաբույսերի, ընդեղենների և մոլախոտային բուսականության մոտավոր խմբերում: Սկսելով նրանից, որ բոլոր տեսակի բույսերը զարնանը բողոքում, աճում, ծաղիկներ ու պտուղներ են տալիս, յուրաքանչյուրն իր բնությամբ, գույնով, հոտով ու համով, հեղինակն այնուհետև իր ընդհանուր միտքը մասնավորում է. «Արման բաղցրահամ և գեղեցկատես... դիր տեսիլն և զգոյնն և զհամն և զարարն բերիցէ և զբնական զարմատոյն, զծննդեան բուսոյն: Նույնպես և թուզն զտեսիլ իւրոյ տերեւվոյն և զարար կեղեւոյն և զտարր մրգոյն ի նման է ուրիշ. և այլքն ի նմանէ ուրոյնր: Զի խնձորն զիր օրինակն է տանձն զիրն և զեղձն զիրն: Սուչնպէս կիտրոնն և ապաբաղսամոնն և զպփնին և ձիթենին զեղեցիկ և սերկեւիլն և մուրտն և ընկուղն և նուշն և քնարուկն և հաճարուկն և թուզն և նուռն և հոյնն: Եւ ամենայն ծառք մրգաբերք, ծաղկաբերք, և տերեւաբերք բարձունք և մեծամեծք. որպես մայրն և նոճն, սօսն և գին և կաղամախն և ուռին»<sup>15</sup>:

Ագաթանգեղոսը պտղատու և անտառային ծառատեսակները թվարկելուց հետո անցնում է ծաղկաբույսերին, հացաբույսերին, ընդեղեններին, մոլախոտային բուսականությանն ու հերթականությամբ հիշատակում՝ վարդի, շուշանի, հասմիկի, նարգիզի, համասփյուռի, մեղրուկի, մանուշակի, ցորենի, հաճարի, զարու, կորեկի, ոսպի, ոլոռի, սիսեռի, եղինջի, ժանտափուշի, սրափուշի

<sup>13</sup> Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 324—325:

<sup>14</sup> Ա. Գ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 89:

<sup>15</sup> Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 329—330:

և այլ բույսերի անոնները: Եվ այս բոլորը հեղինակը մեջ է բերում միայն նրա համար, որ ասի թե՛ «արդարև իսկ գարունն բուսաբեր՝ զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ»:

V դարի ինքնուրույն գործերից որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև Մովսես Խորենացուն վերագրվող «Յաղագս պիտոյից» կոչվող աշխատությունը: Այստեղ, հայ գրականության մեջ առաջին անգամ համառոտակի նկարագրվում են ձիթենին, արմավենին, խաղողի վազը, տրվում է նրանց օգտակարության և վնասակարության հարցերի բնութագիրը: Այսպես, օրինակ, «Պիտոյից» գրքում ձիթենին ներբողված է բոլոր տեսակի ծառերից «պատվականագոյնն ու փարթամն, իր առավելեալ ազնվականութեամբ»: Գովելի է նաև արմավենին, որն ունի «յարագուարճ պայծառութիւն և քաղցրաճաշակ պտուղ», բայց իր նշանակության մը չի կարող հավասարվել ձիթենուն, որովհետև նա «զանլոյս աղջամուղջ գիշերոյն գրեթե անստուեր միջորեայ գործի... և խառնե բժշկացն առողջական սպեղանիս բազում անգամ զախտաժետություն փարատելով»: Հակառակ դրանց, գրքում խիստ «պարսավանքի» է ենթարկվում խաղողի վազը, որովհետև արտաքինից իր համով ու գույնով «գրավիչ է», բայց ներսից ունի «դառն շարութիւն»<sup>16</sup>: Այս «շարութիւնը», ըստ երևույթին, նրա համար է, որ նա գինու աղբյուր է հանդիսանում, իսկ գինին էլ՝ բազմաթիվ շարիքների:

Պտղատու բույսերի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հանդիպում Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում (VII դար): Այստեղ հիշատակվում են ոչ միայն պտղատու ծառերի մի շարք տեսակների անոնները, այլև նշվում նրանց մշակության վայրը: Այսպես, օրինակ, շագանակ մշակվում է Տարոնի նահանգում, Արածանիի հովտում, ձիթենի՝ Ուտիք նահանգում, նշենի՝ Տայքում, նունենի՝ Սյունիքում, Արևիք գավառում, պիստակենի՝ Հայկական Տավրոսի, Արեգունիի փեշերին, սերկելիենի՝ Տայքում և Գուգարքում, կիտրոն՝ Կուր գետի ափերին, խաղող՝ Վասպուրականում—Գողթն գավառում<sup>17</sup>:

Հարկ է ասել, որ անցյալում հայկական բազմատեսակ պտուղների սկզբնավորման ու տարածման աղբյուրը հանդիսացել է գլխավորապես, «Արարատյան աշխարհը», որտեղ հնում և

<sup>16</sup> Մովսես Խորենացի, Մատենագրութիւն, գիրք Բ, Վենետիկ, 1865, էջ 464:

<sup>17</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1968, էջ 92, 94, 96, 98:

միջին դարերում տնկվել են մի շարք այգիներ: Այդ մասին որոշ տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ: Այսպես, Մովսես Խորենացին գրում է, որ Երվանդ IV թագավորը (208—188 թթ.) Ախուրյան գետի ձախ ափին հիմնում է Երվանդակերտն ու նրա շուրջը ստեղծում ծաղկանոցներ, պարտեզներ և այգիներ: «Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովաթի միջին մասը լցնում է բնակչությամբ և պաշտառ շինություններով... Իսկ շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ դժին, որոնք դասավորված էին հարմար դարվանդների վրա»<sup>18</sup>:

VII դարի հեղինակ Սերեոսը հիշատակում է, որ ներսես Տաչեցի Կաթողիկոսը Զվարթնոցի կառուցումից հետո «Ածեալ ջուր ի Քասաղ գետոյ և արկ ի գործ դամենայն վայրսն առապար տնկեց այգիս և ծառատունկս»<sup>19</sup>, IV—VII դարերում մի շարք այգիներ են հիմնվում նաև Արտաշատում, Տիգրանակերտում, Դրվինում, Վաղարշապատում, Երևանում, Օշականում: Նշված շքրջանում առանձնապես այգեշատ են եղել Արարատյան նահանգի Ոստան, Արագածոտն, Կոտայք, Մասլացոտն և այլ գավառների մի շարք քաղաքներն ու գյուղերը: Արարատում, բացի պտղատու տեսակներից, մշակվում էին հացահատիկային, տեխնիկական, բանջարանոցային և կերային մի շարք բույսեր: Արարատը հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական, այլև մշակութային ու տնտեսական կյանքի օրրանն էր: Դրա համար էլ մեր մատենագիրները նրա մասին մեծ գովեստով են խոսել, անվանելով այն «գրախտ», «ամենարույս», «ամենարերի», «գլուխ հայոց», «Միջնաշխարհ հայոց» և այլն:

Այժմ գրավոր աղբյուրների ուսումնասիրություններից պարզվում է, որ անցյալում Հայաստանի առանձին գավառներում, բացի այգիներից, տնկվել են մի քանի պուրակ-անտառներ: Դրանցից համեմատաբար նշանավոր են եղել Արմավիր մայրաքաղաքի մոտ գտնվող սոսիների պուրակը («Սոսյաց անտառ»), Բագարանի շրջանում «Մննդոց անտառը», Արտաշատի և Դվինի մոտ գտնվող Խոսրով թագավորի տնկած անտառը<sup>20</sup>: Այդ առթիվ

<sup>18</sup> Մովսես Խորենացի, *Նշվ. աշխ.*, էջ 176:

<sup>19</sup> Սերեոս, *Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879*:

<sup>20</sup> Թ. Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 55, 124*:

հորենացին հիշատակում է, որ Երվանդ թագավորը Ախուրյան գետի վրա կառուցելով Բագարան քաղաքը, տնկում է նաև մեծ անտառ և ներսն արգելափակում զանազան կենդանիներ: Անտառն կոչվեց «Մենդոց»:

Այդպիսի աշխատանքներ կատարել է նաև մեր թվականության IV դարում Տրդատ III-ի որդի խոսրով թագավորը: Փավստոս Բուզանդն իր «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ մանրամասն նկարագրել է այդ ձեռնարկումները: «Եւ ետու հրաման թագաւորն հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց և տնկել զայն Այրարատյան գաւառին. և առեալ յամուր բերդեն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտ Մեծամօրի ի բլուրն՝ որ անուանեալ Դուրին որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսըն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եվ միւս ի մայրեացն յեղէգնաբերանքն ինմանն ի հարակողմս լցրին զդաշտն կաղնատուն՝ տնկով և կոչեցին զանուն նորա խոսրովակերտ»<sup>21</sup>:

Նույն ձեռնարկության մասին Լեոն ավելացնում է. «Այն ժամանակ ծառատունկեր հիմնելը ունեը իր հատուկ անունը՝ «խաշար անել»: խոսրովի կարգադրությանը այդ խաշարը պիտի լիներ վայրի կաղնիներից: Ամբողջ երկիրն էր մասնակցում այդ պարտադիր աշխատանքին և արհեստական անտառները բավական մեծ տարածություններ բռնեցին»<sup>22</sup>:

Վերջապես, Հայաստանի զարգացած այգեգործության մասին են վկայում նաև մի շարք վայրերում հանդիպող հնձանների ավերակները և երկրի հնագույն բնակավայրերում՝ Արտաշատում, Տիգրանակերտում, Դվինում, Վաղարշապատում, Գառնիում, Գեղարդում, Թալինում, Ախթամարում մինչև այժմ պահպանված ճարտարապետական կոթողները: Սրանց պատերի, սյունների, կամարների, խոյակների վրա քանդակված են խաղողի, խնձորի, նռան և այլ պտուղների պատկերներ, որոնք հնագույն ժամանակներից ի վեր եղել են հայկական ճարտարապետության խորհրդանիշերը:

<sup>21</sup> Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, էջ 13:

<sup>22</sup> Լեո, Երկրի ժողովածու, հատ. I, Երևան, 1966, էջ 434:

САДОВОДСТВО В АРМЕНИИ С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН  
ДО VII ВЕКА

## Резюме

Древние обитатели Армении наряду с различными отраслями земледелия занимались также садоводством, что подтверждается прежде всего наличием соответствующего археологического материала. В начале современной геологической эры на территории Армянского нагорья были распространены яблоня, груша, орех, виноград. При раскопках в большом количестве были обнаружены карасы (огромные глиняные сосуды) для вина, остатки семян и фруктов. Так, в неолитическом поселении Гарни найдены косточки абрикоса, а в Шенгавите — косточки черешни. В населении Ханлара в Арцахе обнаружены семена персика и винограда. Автор показывает, что хотя в Армении садоводство возникло в далеком прошлом, однако его развитие в основном начинается в IV тысячелетии до н. э. Вместе с тем выявленные материалы показывают, что плоды абрикоса, персика, винограда и ряда других культур являлись ценным пищевым продуктом для аборигенов.

Садоводство в Армении получило значительное развитие в IX—VII вв. до н. э. В настоящее время мы располагаем фактическим материалом, свидетельствующим о строительстве оросительных каналов, о закладке виноградников и плодовых садов. Так, в одной из клинописных надписей, обнаруженных в Араратской долине, царь Аргишти (781—760 гг. до н. э.) говорит: «построил я великолепную крепость, от реки провел канал, посадил виноградники и плодовые сады...». В относящемся к тому периоду поселении на Кармир Блуре обнаружены винные карасы (общей емкостью в 40.000 декалитров), семена винограда, напоминающие местные сорта Воскеат, Гаран дмак, Мсхали, косточки и остатки абрикоса, сливы, яблони, граната.

Садоводство в Армении переживает новый подъем во II—I вв. до н. э. и в I—IV вв. н. э., о чем свидетельствуют греческие историки Геродот, Ксенофон и Страбон. Исследования трудов армянских и зарубежных авторов дают основание полагать, что уже с V века н. э. в Армении появляется сельскохозяйственная наука. В труде армянского историка V века Агафангела «История Армении» описываются деревья яблони, груши, персика, айвы, ореха, граната, инжира, шелковицы, маслины, лимона. В оригинальной и переводческой литературе V—VII вв. встречаются определенные научные мысли о биологических особенностях плодовых деревьев и агротехнике их возделывания, о корневой системе деревьев разных видов, о самоопылении, о значении обрезки и пользе плодов.